Իսկ թէ միայն կարմիր փուշ է, և ոչ է վարդ քաղցրահոտ,
Նորան շուտով դուրս կ'հանէ իւր բուրումն զարշահոտ։
Հատ խօսեցայ վերջին նուագս, այժմ կասեմ կամ բարեաւ,
Մի մոռանար քո Վարդանին, մի ասեր թէ Նա կորեաւ.
Ինչպէս մարդը թէև մեռնի, գործք և անուն չեն մեռնիր,
Դանձ, ճոխութիւն անհետ կերթան, սէր ազգին չի վախճանիր։

Հայկազն Ծերունի՝ հեղինակ էրամոհոլեան
և Վահագնի պատգրելոց է Հիւնիս։

Ի ԾՈՎ ԿԵՆՑԱՂՈՑՍ

(Զէ՛ ղր ուերմանէսցէ մարդ՝ ընդ և հնչէսցէ "գողդ", 6. 8.)

Քանի՛ ի հողմն ուժգնալաղաղ, առ ծովն հայիմ Տէր Յիսուս,
Ես յոյժ պակնում յերկիւղ մեծ, ոստնու արագ յինէն յոյս.
Զի թէ կոհակք անդ ի վէգ, զնա այնպէս նշաւակ,
Զիս զի՞նչ առնեն ալիք, մեղք, յոր ես ծփիմ զերթ նաւակ.
Նա ըստ իմում թէպէտ ո՛չ, այլ ըստ սահման քում այնպէս,
Թէ մերթ դադար և թէ կոծ, ցուցցէ զփառս քոյդ պէս պէս.
Բայց և նմա Արփին միշտ, զարև ո՛չ տայ լոյս պայծառ,
Գոգցես ընդ ջուրցն շամանդաղ, բազմիցս տայ մէգ և խաւար։
Օ՜ն ինձ չարեաց մատնիչք որք, բայց թէ արարք ինձական.
Զարև կենացս տարագիր, յինէն ի բաց վարել գան.
Ի՞նչ այլ իցեն սիրտիչք, երբ վճիռ է անքակ, թէ՝
,,Սերմանօղին մեան հունձք,,, որում կարի իսկ մարթէ.
Հապա՛ անձն մեղսածուփ, խաղա՛ ընդ հողմն ուռուցիկ,
Զոր վաշխ առեր չար գործոցդ, քեզ յաւելան տոկոսիք,
Ընդ մահաբեր կոհակաց, որք գան ընդ քեզ ի պայքար,
Որոմ կացցես դիմամարտ, չո՛ւնիս դու ղէկ, թիավար։
Հոլովքն յոլովք քեզ կորուստ, ի յաւիտեան անշուշտ տան,
Կորուստ՝ յորում եղծագործք, կան ընդ դիւացն ի տատան.
Ո՞հ դու ընդ ղէկն խուճապեա՛ց, ընդ ապաշաւն ասեմ քեզ,
Ոյր ղեկավարն ստրջանք, և թիավարն աղօթքն հեզ։
Ի սպեղանեաց փրկութեան, զիա՞րդ խորշիս անձն իմ հէգ,
Զուր ժխտելով և ունայն, յետս ընկրկիս իբր մերկ,
Բա՛ և բանին Յովհաննու, զքեզ առնես դիմադարձ,
,,Եթէ անմեղ զանձնս՝ ասեմք, խաբեմք,, տուժիմք անդրադարձ։
Գիտեմ ես Տէր և ճշգրիտ, եթէ պահ մի ակնթարթ,
Դարձցի յինէն երեսդ ի բա՛ց, ի խորս սուզիմ արդէն արդ,
Յուսով առ քեզ առձայնեմ, փրկեա՛ ի ջուրց մեղսակոծ,
Սաստ արկ հողմոց և ալեաց, որոց դրինդն յանդնղոց։

Սարգիս Յովհան Բաղալեան Օշականցի

Ի Սեվան։